

Մասնագիտություն – 2907«Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ»	
Պաշտոնի / զբաղմունքի / անվանումը	«Հյուսն, ատաղձագործ»
I. Դերը`	Համապատասխան աշխատանքային գծագրերի ու էսքիզների, փայտանյութի տեսակով ու կտրավածքով, վնասակար արատներից զերծ, ձեռքի գործիքներով ու հաստոցներով, նախապատրաստվածքների, պարզագույն շինվածքամասերի և կենցաղային իրերի պատրաստելը, ինչպես նաև շինվածքամասերի երեսամշակելը, երեսապատելը, միացնելը ու ամրացնելը, հավաքման գծագրերին համապատասխան տանիքի, հատակի չափագծելը և դրանց շինվածքամասերի պատրաստելը, ըստ էսքիզի ու աշխատանքային գծագրի դուռ և պատուհան պատրաստելը:
I I. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Կարդալ տիպային աշխատանքային գծագրեր և պատկերել հանգույցամասերի էսքիզներ, աշխատանքային գծագրեր,	
Աշխատանքային գործընթացը	Կառուցվածքների երկրաչափական պատկերը հարթության վրա և տարածության մեջ համապատասխանում են իրենց նշանակվածությանը, պահպանված են մասշտաբները, տեղադրված են պայմանական նշանները, պատկերված կտրվածքներում հանգույցները հստակ են, աշխատանքային գծագրերի առանձնահատկությունները պարզ մեկնաբանված են, անհրաժեշտ գրառումները կատարված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել երկրաչափական կառուցումները հարթության վրա, հավաքական գծագրերում տիպային միացությունները, կատարել տիպային դետալների հարթության վրա պրոյեկտում, կառուցել տարածական արտոնումետրիկ պատկեր, պատկերել կտրվածքներ, էսքիզներ և աշխատանքային գծագրեր, բնօրինակից համապատասխան էսքիզ և աշխատանքային գծագիր, տեղադրել չափեր, կարդալ աշխատանքային գծագրերը, մեկնաբանել մասշտաբները, տեխնիկական, մասնագրերը, պայմանները և պայմանական նշանները, տարբերակել շինարարական գծագրերում փայտե կառուցվածքները:
Խնդիրների բնագավառ 2. Գծանշել, չափել, ստուգել շինվածքամասի նմուշը:	
Աշխատանքային գործընթացը	Չափանշման, չափման և ստուգման գործիքների կառուցվածքը և թույլատրելի շեղումները, թույլտվածքների և նստեցվածքների համակարգը մեկնաբանված են, պայմանական նշանների և մաքրության դասերի թվային ցուցանիշները ներկայացված են, գծանշման բազան ընտրված է, չափումները և ստուգումները կատարված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել հանգույցամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը, մակերևույթների մշակման անհարթությունները, մեկնաբանել ճշտությունների ու անհարթությունների պայմանական նշանները: Ներկայացնել հիմնական չափիչ, չափանշման և ստուգող գործիքները և հարմարանքները, կատարել չափումներ և ստուգումներ:
Խնդիրների բնագավառ 3. Տարբերակել փայտանյութերը, արատները:	
Աշխատանքային գործընթացը	Փայտանյութի կտրվածքները ներկայացված են, կառուցվածքային

	հիմնական տարրերը պարզաբանված են, ծառատեսակները, փայտանյութի հիմնական հատկությունները, արատների տեսակները և առանձնահատկությունները, պահպանման միջոցները մեկնաբանված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել ծառի կառուցվածքը, փայտանյութի ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկությունները, արատների տեսակները, փայտանյութերը մթնոլորտային չորացումից, հոտումից և միջատների քայքայումից ապահովման եղանակները, փայտանյութերը բոցավառումից պաշտպանման միջոցները:
Խնդիրների բնագավառ 4. Կտարել ձեռքի գործիքներով աշխատանքներ:	
Աշխատանքային գործընթացը	Ձեռքի գործիքներով աշխատանքների բնութագրերը մեկնաբանված են, դազգահի կառուցվածքը, գործիքները, սևեռող հարմարանքները ներկայացված են, գծանշումները, սղոցման, հատման, կտրման, ռանդման աշխատանքները կատարված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու աշխատատեղը, ըստ նշանակության աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ, օգտվել սևեռող հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները:
Խնդիրների բնագավառ 5. Պատրաստել և կատարել տիպային միացումներ, ամրացումներ:	
Աշխատանքային գործընթացը	Տիպային միացումները, ամրացումների առանձնահատկությունները մեկնաբանված են, սուսինների և ամրակումների տեսակները պարզաբանված են, միացումների հանգուցամասերը պատրաստված են, ամրացումները կատարված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Մեկնաբանել փայտանյութ միացումները, միացումներում օգտագործվող սուսինների և ամրակումների տեսակները, ներկայացնել ամրակումների կառուցվածքը, սուսինների բաղադրությունը, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ, պահպանել անվտանգության կանոնները:
Խնդիրների բնագավառ 6. Կատարել երեսամշակում:	
Աշխատանքային գործընթացը	Երեսամշակման աշխատանքների բնութագրերը, նախապատրաստվածքների և օգտագործվող նյութերի տեսակները մեկնաբանված են, նախապատրաստվածքների մակերևույթները նախապատրաստված են, երեսամշակման աշխատանքները կատարված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել երեսամշակման նախապատրաստվածքների, օգտագործվող նյութերի տեսակները, կատարել մակերևույթների նախապատրաստում, երեսամշակում, պահպանել անվտանգության կանոնները:
Խնդիրների բնագավառ 7. Կատարել երեսապատում:	
Աշխատանքային գործընթացը	Երեսապատման աշխատանքների բնութագրերը, նախապատրաստվածքների և օգտագործվող նյութերի տեսակները մեկնաբանված են, նախապատրաստվածքների մակերևույթները նախապատրաստված են, երեսապատման աշխատանքները կատարված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել երեսապատման, նախապատրաստվածքների, օգտագործվող նյութերի տեսակները, կատարել մակերևույթների նախապատրաստում, երեսապատում, պահպանել անվտանգության կանոնները:

Խնդիրների բնագավառ 8. Պատրաստել փայտամշակման հաստոցներով տիպային շինվածքամասեր:	
Աշխատանքային գործընթացը	Փայտամշակման հաստոցներով աշխատանքների բնութագրերը, հիմնական մասերի աշխատանքները մեկնաբանված են, հիմնական նախապատրաստվածքների, փայտակտրող, չափիչ և գծանշող գործիքների տեսակները, չափադրումները կատարված են, կտրող գործիքները և նախապատրաստվածքները տեղադրված են, հաստոցի աշխատանքային ռեժիմները ընտրված են, դետալները պատրաստված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Մեկնաբանել փայտամշակման մեջ օգտագործվող հիմնական նախապատրաստվածքների տեսակները, հաստոցի հիմնական մասերի աշխատանքների սկզբունքները, ներկայացնել փայտամշակման հաստոցներում օգտագործվող փայտակտրող գործիքները, չափիչ և գծանշող գործիքների տեսակները, կատարել չափումներ, գծանշումներ, պատրաստել տիպային շինվածքամասեր, պահպանել անվտանգության կանոնները:
Խնդիրների բնագավառ 9. Պատրաստել տանիքի, հատակի շինվածքամասեր, դռներ, պատուհաններ:	
Աշխատանքային գործընթացը	Շինարարության մեջ և կենցաղում օգտագործվող փայտե շինվածքների ու մասերի, օժանդակ նյութերի տեսակները մեկնաբանված են, էսքիզները, աշխատանքային գծագրերը կազմված են, չափադրումները, գծանշումները կատարված են, կենցաղային պարզ իրերը, տանիքի, հատակի, դռների պատուհանների շինվածքամասերը պատրաստված են, դռները, պատուհանները հավաքված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Կատարման չափանիշներ	Ներկայացնել տանիքի, դռների, պատուհանների կառուցման համար օգտագործվող շինվածքները և նյութերը: Ներկայացնել տանիքի տեսակները, կարողանալ պատրաստել տանիքի և հատակի շինվածքամասերը: Ներկայացնել դռների և պատուհանների կառուցվածքը, կարողանալ պատրաստել դռների ու պատուհանների շինվածքամասերը, դռներ ու պատուհաններ: Ներկայացնել կենցաղային իրեր պատրաստելու համար օգտագործվող գործիքների տեսակները, կարողանալ պատրաստել պարզագույն կենցաղային իրեր, պահպանել անվտանգության կանոնները:
III. Պատասխանատվությունը	Տանիքի, հատակի պատրաստման աշխատանքների իրականացում, դռների և պատուհանների պատրաստման աշխատանքների իրականացում, կլոր անտառանյութերի պատրաստման, տեսակավորման, չափման, հաշվառման, մակնիշավորման աշխատանքների իրականացում, սղոցանյութերի և նախապատրաստվածքների պատրաստման, տեսակավորման, չափման, հաշվառման, մակնիշավորման աշխատանքների իրականացում, կենցաղային փայտե շինվածքների և շինվածքամասերի, տարբեր իրերի պատրաստման աշխատանքների իրականացում, շնարարական տարբեր փայտե շինվածքների և շինվածքամասերի պատրաստման աշխատանքների իրականացում, փայտե շինվածքների և շինվածքամասերի վերանորոգման աշխատանքների իրականացում:
IV. Լեզուները	Հայերեն, բավարար ռուսերեն
V. Համակարգիչը	WORLD ծրագիր

VI. Գիտելիքները	Նյութագիտություն, գծագրություն, անվտանգության կանոններ, մասնագիտական,
VII. Կարողությունները և հմտությունները	Անգեն աչքով ծառերի տեսակներ ճանաչելը, անգեն աչքով սղոցանյութերի և նախապատրաստվածքների կառուցվածքով ծառատեսակներ ճանաչելը, փայտե շինվածքներ և շինվածքամասեր տեխնիկական պահանջներով պատրաստելը և ստուգելը, Ձեռքով, էլեկտրական սարքավորումներով, հաստոցներով տիպային փայտամշակման աշխատանքներ իրականացնելը, երեսապատման և երեսամշակման աշխատանքներ իրականացնելը, հաստոցներով փայտամշակման աշխատանքներ իրականացնելը, փայտամշակման միացումներ պատրաստելը, տանիքի, հատակի փայտե շինվածքամասեր պատրաստելը, դռներ և պատուհաններ պատրաստելը, աշխատավայրում, աշխատատեղում և աշխատանքներ իրականացնելու ժամանակ անվտանգության նհակահրդեհային կանոններ պահպանելը:
VIII.	Աշխատանքային կարգապահություն, գիտելիքների, հմտությունների և ունակությունների անընդհատ ուսուցում:

ՄԱՍՆԱԳԵՏԻ

2907 «ԱՏԱՂՁԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՑԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՄՆ, ԱՏԱՂՁԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներից վերաբերող նյութերից՝ ընդհանուր թվով 20 հարցից:
Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:
2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է

կատարել նշված գործողությունները՝

- Կատարել երկրաչափական կառուցումներ, տիպային դետալների պրոյեկտումներ հարթության վրա, տարածական աքսոնոմետրիկ պատկերում, կտրվածքներ, էսքիզներ և աշխատանքային գծագրեր, բնօրինակից համապատասխան էսքիզ, աշխատանքային գծագիր, չափերի տեղադրում:
- Կարդալ աշխատանքային գծագրերը, մեկնաբանել մասշտաբները, տեխնիկական պայմանները և պայմանական նշանները:
- Տարբերակել շինարարական գծագրերում փայտե կառուցվածքները, ներկայացնել հավաքական գծագրերում տիպային միացությունները, կարդալ փայտե կառուցվածքների աշխատանքային գծագրերը, մեկնաբանել հավաքական գծագրերում պայմանական նշանակումները, մասնագրերը և տիպային հավաքական գծագրերի տեխնիկական պահանջները:
- Պարզաբանել հանգույցամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը, պարզաբանել ճշտության պայմանական նշանները:
- Մեկնաբանել փայտանյութի մակերևութների մշակման անհարթությունները, պարզաբանել պայմանական նշանները:
- Կատարել հիմնական չափիչ ու չափանշման գործիքներով չափումներ, ստուգումներ:
- Մեկնաբանել ծառի կառուցվածքը, ծառերի դասակարգումը և կիրառման բնագավառները: որոշել ըստ արտաքին տեսքի ծառատեսակները:
- Մեկնաբանել փայտանյութի տեսակները, դասակարգումը, պարզաբանել ըստ հիմնական կտրվածքների փայտանյութի կառուցվածքը, որոշել ըստ կառուցվածքի ծառատեսակը:
- Մեկնաբանել հիմնական ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկությունները, կիրառման բնագավառը, որոշել ֆիզիկական հատկությունների միջոցով փայտանյութի տեսակը:
- Մեկնաբանել փայտանյութի սնկային, կենսաբանական արատների, քիմիական գունավորման գոյացման տեսակները, դրանց ազդեցությունը փայտանյութի որակի վրա, որոշել քիմիական գունավորման գոյացման միջոցով ծառատեսակները:
- Մեկնաբանել փայտանյութի ածխացման, գոգավորության, մեխանիկական, մշակման և տարատեսակ արատների տեսակները, ազդեցությունը փայտանյութի որակի վրա, կատարել ածխացման, գոգավորության արատների չափումներ:
- Մեկնաբանել փայտանյութի մթնոլորտային չորացումից, հոտումի և միջատների քայքայումից ապահովումը, փայտանյութերը բոցավառումից պաշտպանելու միջոցները:
- Պարզաբանել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու աշխատատեղը, մեկնաբանել ըստ նշանակության կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ ձեռքի ընդհանուր նշանակության գործիքներով, օգտվել սևեռող հարմարանքներից:
- Մեկնաբանել ձեռքի հատման և սղոցման գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:
- Մեկնաբանել ձեռքի կտրող գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:
- Մեկնաբանել ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:

- Մեկնաբանել ամրակումների տեսակները, կառուցվածքը, կատարել միացումներ:
- Մեկնաբանել սոսինձների բաղադրությունը, տեսակները, կատարել միացումներ:
- Մեկնաբանել անկյունային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել անկյունային միացումների էքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ:
- Մեկնաբանել ճակատային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել ճակատային միացումների էքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ:
- Մեկնաբանել կողային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել կողային միացումների էքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ:
- Մեկնաբանել T-աձև և խաչաձև միացումներ միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել T-աձև և խաչաձև միացումների էքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ:
- Մեկնաբանել փայտամշակման մեջ օգտագործվող հիմնական նախապատրաստվածքների բնութագրերը, տեսակները, կատարել նախապատրաստվածքների չափումներ:
- Մեկնաբանել փայտամշակման հաստոցներում օգտագործվող փայտակտրոդ, չափիչ և գծանշող գործիքների բնութագրերը, աշխատանքների սկզբունքները:
- Մեկնաբանել լայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել երկայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել ֆուգանիչ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել ռեյսմուսային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել ֆրեզերային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել բութակահատ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել գայլիկոնիչ-փորակիչ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել հղկման հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
- Մեկնաբանել տախտակե հատակի կառուցվածքը, օգտագործվող նյութերը, կատարել հատակի չափագծումներ:

- Պատկերել տախտակե հատակի փայտե շինվածքամասերի էսքիզները, աշխատանքային գծագրերը, պատրաստել տախտակե հատակի փայտե շինվածքամասերը:
- Մեկնաբանել տանիքների տեսակների առանձնահատկությունները, պարզաբանել փայտե շինվածքների կառուցվածքը, կատարել տանիքի չափագծումներ:
- Պարզաբանել կրող մասի կառուցվածքը, պատկերել կրող մասի շինվածքների էսքիզը, աշխատանքային գծագիրը:
- Մեկնաբանել ծպեղի տեսակների առանձնահատկությունները, պատրաստել փայտե հեծաններ, ծպեղի շինվածքամասեր, հավաքման ձևվածքների շինվածքամասեր:
- Մեկնաբանել ըստ հատկանիշների դռների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները:
- Մեկնաբանել ըստ նշանակության, ըստ կառուցվածքի դռների տեսակները, կատարել էսքիզներ և աշխատանքային գծագրեր:
- Պատրաստել ըստ պայմանի արտաքին դուռ:
- Պատրաստել ըստ պայմանի ներքին դուռ:
- Մեկնաբանել երեսամշակման մակերևույթների նախապատրաստման համար օգտագործվող նյութերի բնութագրերը, գործիքների տեսակները, կատարել մակերևույթների նախապատրաստման աշխատանքները, երեսամշակում:
- Մեկնաբանել երեսապատման համար օգտագործվող նյութերի բնութագիրը, կատարել երեսապատում:
- Մեկնաբանել ըստ հատկանիշների պատուհանների տեսակները, մեկնաբանել կառուցվածքային առանձնահատկությունները:
- Մեկնաբանել ըստ նշանակության, ըստ կառուցվածքի պատուհանների տեսակները, կատարել էսքիզներ և աշխատանքային գծագրեր:
- Պատրաստել ըստ պայմանի պատուհան:
- Մեկնաբանել հյուսնային աթոռակի կառուցվածքը, կատարել էսքիզ, աշխատանքային գծագիր, պատրաստել հյուսնային աթոռակ:
- Մեկնաբանել կարճապահարանի կառուցվածքը, կատարել էսքիզ, աշխատանքային գծագիր, պատրաստել հյուսնային աթոռակ:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: